

2017 թվականին ներքին աուդիտի տարեկան հաշվետվություն

Ներքին աուդիտի բաժինը ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզպետի կարգադրությունները, 2016թ. ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժինն աուդիտ է իրականացրել 49 միավորներում ներառելով 2014,2015,2016 թվականները:

Ներքին աուդիտի բաժինը համակարգի գնահատման աուդիտ է իրականացրել 44 «Պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ներում, իսկ 4 բժշկական կենտրոն ՓԲԸ-ներում և 1 առողջության կենտրոն ՊՈԱԿ-ում իրականացրել է ֆինանսական աուդիտ, որի մեջ ներառված է գնումների աուդիտ, այդ թվում՝ գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող և քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտ՝ գնման ընթացակարգի և պայմանագրի կատարման մասով:

Աուդիտորներն աուդիտորական ուսումնասիրությունների ընթացքում հայտանաբերել են բազմաթիվ թերություններ, որի վերաբերյալ կազմվել են աշխատանքնային փաստաթղթեր և դրանցում տեղ գտած բացահայտումների ու եզրակացությունների հիման վրա կազմվել են նախնական և վերջնական հաշվետվություններ:

Վերջնական հաշվետվությունները քննարկվել են ներքին աուդիտի կոմիտեի կողմից գումարված նիստերում և կազմվել են արձանագրություններ, այնուհետև կազմվել են գործողության ծրագրեր:

Ըստ վերջնական հաշվետվությունների ներքին աուդիտի ենթարկված 49 միավորներում բացահայտվել են 464 թերություն, որոնց շտկելու նպատակով գործողությունների ծրագրով սահմանվել են 231 առաջարկություն:

Աուդիտի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է 10169180 ՀՀ դրամի խախտում, որից 8728612 ՀՀ դրամը ներքին աուդիտի կոմիտեի կողմից գումարված

նիստերի արդյունքում առաջարկվել է վերականգնել կազմակերպության բյուջե, իսկ **1440568** ՀՀ դրամը ՀՀ պետական բյուջե:

2017թ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման աուդիտի առաջադրանքների իրականացման որակի վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորների կողմից լրացված ստուգաթերթով գնահատման արդյունքը կազմել է 3.5:

2017թ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման 4 աուդիտորներ մասնակցել են շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

Ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքների պլանավորումը փոխհամաձայնեցվում է՝ անհրաժեշտության դեպքում ռազմավարական և տարեկան ծրագրում կատարելով փոփոխություններ:

Ներքին աուդիտի ստորաբաժանման համար անհրաժեշտ է, որ աշխատակիցների համար պարբերաբար կազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ, փորձի փոխանակում, որոնք կնպաստեն այս համակարգի հետագա զարգացմանը և ավելի արդյունավետ գործունեությանը:

Ներքին աուդիտի բաժնի պետ

Ս. Մուրադյան